

և առջևը բերել տուաւ: Անոր զաւակաց հարստաւագոչ աղերսը՝ զիրենց չզրկելու հայրենի ժառանգութենէն, և իւր ցիւսա-յութեան զուժը՝ ամբեցին անոր ցասու-մը: Գործնական մարդ, ի հիմանց քանդեց անոնց ամբողջը, որպէս զի չխորհին անգամ մ'ալ խլտիլ, և թողոց վայելել իրենց ժառանգութիւնը՝ վասպուրականի գրօշին ներքեւ (312-13): Հետ գնտէ նուանեց կամ հարուածեց նաև ուրիշ ըմբոստ իշ-խաններ, ինչպէս Շապուհ և Մովկաց տեարըր (312, 314), և գրաւեց այլազ-գեաց ձեռք զոնուած բերդերը (315-17):

Իւր քեռին Սմբատ արքայ սկսաւ կաս-կածիլ անոր ընթացքին ու նպատակի մասին, և միջոցներ ձեռք առաւ՝ որպէս զի չգօրանար: Այս բանս աւելի զրգռեց գիտագին, որ Վրաց Աւրենբրսն թագաւո-րին ու Սմբատայ Աշոտ եղբորդուոյն հետ միացաւ, զնաց յարեցաւ քեռույն թշնամի Յուսուփ ոստիկանին, և անոր զինակից դարձաւ: Հայոց զահր զրաւելու նպատա-կով, Արարացին մեծ ուժերով խաղաց Սմբատայ դէմ, խորտակեց անոր բանակն ու ձերբակալեց զայն, անոր երկրաւոր թիպը փոխանակելով երկնաւորով: Ե զԳա-թիկ փառաւորեցուր (318. կիթ. ԽԳ. Ասող. Գ. դ. Թով. 317-21) «Ի վերայ ամե-նայն Հայոց»՝ ըստ բաղձանաց Արծրունի պատմչին (321): Այսպէս Վասպուրականի Մլքէ տիկինն ալ կը դառնար «Հայոց թագուհի»՝ տիտղոսով միայն. որովհետև իրենց իշխանութեան սահմանները նոյն մնացին ինչ որ էին, և քաղաքատունեաց արծիւը շուտով վերաբացաւ թեւերը Շի-րակայ վրայ:

Հիմայ ճանչցանք՝ թէ ո՞վ էր Մլքէ. Արծրունի մը՝ լծակցած Արծրունւոյ մը: Մնած բարեպաշտութեամբ և ուսումնա-սիրութեամբ հայրենի տանը մէջ, նոյն-պէս ալ մնաց Գագկայ զահուն վրայ: Եւ իւր անունն ու յիշատակը յանձնեց Ս. Դազարու՝ ծանօթ Աւետարանով, և Վա-րազայի ուխտին՝ ձեռակերտովը. «տա-նարն ժամատուն» բարձր և կաթողիկէիւ, զբարբ և որմով անջրպետեալ ի ժամա-

տանէն յարեւից կուտէ... և է նուիրեալ յանուն սուրբ Աստուածածնի», կը գրէ Հ. Ն. Սարգիսեան (Տեղագր. 257):

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՔՆՆԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան առթիւ)

(Շար. տես Բագմ. 1925 էջ 294)

Աղանդների յանդիմանութիւնը լոկ տե-սական, այսպէս ասած, գիտական հար-ցասիրութեան նիւթ չէ եղնիկի համար: Նա ունի և գործնական նպատակներ: Քննելով և տապալելով խոշոր վարդա-պետական սիւսամեները, նա աշխատում է վանել ժողովրդի մէջ արմատացած շըր-ջուն զաղափարներն ու հաւատալիքները, մշակուած դարերի ընթացքում հակաբրիս-տոնէական ուսմունքների տակաւին միջնո-լորտում, աշխատում է հնացած մեռած աշխարհայեացքների միայուն ստուերները վանել քրիստոնէական գիտութեան լուսով:

Աղայիսի գործնական նշանակութիւն ու-նի առաջին զորքի երկրորդ մասը ժիւ-իլ-այսինքն առաջին մեծ յօդուածը տալ բաժ-նի, որ անուանեցինք միջամուխ: Ժողո-վրդական կենդանի միջավայրից առած թանգագին նիւթեր են, որ բերում է եղնիկն ու լուսաբանում, պայքարելով հին տե-սութեանց հետ, հայ ժողովուրդի հաւա-տալիքների և պաշտամունքների աշխար-հին վերաբերեալ հնաւանդ տեղեկութիւն-ներ են, շողուն զոհարներ հայ ֆուկուրի, որ փայլում են եղնիկի էջերում:

Այդ մասին կը խօսինք առանձին յօդուա-ծում, ի նկատի ունենալով նիւթի կարեւորու-թիւնը, այլ և չուզենալով ծանրաբեռնել ներկայ գրութիւնս: Յիշենք միայն այս-քան, որ ժիւ-իլ-միջամուխ գլուխները, մեր կարծիքով, քաղեամբոյ բնաւորութիւն ունին և բացի արդէն յայտնի աղբիւրնե-րից, ինչպէս օր. Հիպպոլիտը, եղնիկն օգտուել է նաև մի հին յիշատակարանից,

որ կոչուում է «Հարցումն և պատասխանիք սրբոյն Գրիգորի Պարթևի»։ Սորան է պարտական իշխելն մանաւանդ հայ ֆուկլորի վերաբերեալ թանգարժէք նւթերը։ Այսպիսով Եղնիկի առաջին գիրքը բաղկացած է երկու տարբեր տարրերից։ հիմնական կամ թարգմանաձոյ բնագիր (Ա-ԺԴ) և երկրորդական կամ թարմատար յաւելում (ԺԵ-ԻԷ)։

Միջ թուում է, որ երկրորդ գիրքն ևս իր կազմով նման է առաջինին, այն է, ունի հիմնական մաս և յարակից աւտոնին հարցերի և նրանց մեկնութեան նուիրուած յաւելում։

Հիմնական են համարելի Ա-ԺԴ գլուխները, ուր քննուում է պարսից քէշը կամ գրուսականութիւնը և հերքում։

Հետեւեալ մասը գրադուում է ժողովրդական հաւատալիքների հետ կապուած մի շարք հարցերով, որոնք պահանջում են նոր լուսարանութիւն, քանի որ հին պատասխանները, որ ծագում էին գրուսականութիւնից, թիւր և մոլար պիտի ճանաչուէին նոյն վարդապետութեան հերքումով։

Առաջին հարցն է, եթէ չարը իբր սկզբունք ինքնուրոյն հեղինակ չունի, եթէ սատանան ևս ի բնէ չար չէ, և միւս կողմից Աստուած անմասն է չարին, ապա ո՞ր տեղից է մահը. և կամ արդեօք առաջուց որոշուած է կեանքի սահմանը, թէ ո՞վ երբ պիտի մեռնի. ուրիշ խօսքով, ճակատագիր կայ թէ չէ, ինչպէս պնդում են աստղագէտները։ Սրան պատասխանում են ԺԴ, ԺԵ և ԺԶ գլուխները։

Իսկ եթէ ճակատագիր չկայ, ինչպէս հասկանանք Աստուծոյ կանխագիտութիւնն ու կանխահատուցումն։ Այս հարցին յատկաբար են ԺԶ և ԺԷ գլուխները։

Անձնիշխանութիւն է պատճառ չարութեան և բարութեան։ Առանց ընտրութեան իրաւունքի մարդիկ կը նմանէին անբան և անպատասխանատու անասուններին, որոնք գործում են յիշողութեամբ և բնագրով և ոչ գիտակցօրէն։

Բայց ինչպէս հաշտեցնել գիտակից ա-

բարձունքի հետ բնագրից բխած թելադրանքները, որ յատուկ են մարդուն ինչպէս և նախագուշակ երազներն։

Հեղինակն իր քաջատուութեան մէջ սուր պուած է հաշուի առնել և դէի մասնակցութիւնը մի քանի դէպքերում, ուստի և խօսքը կնքում է նորէն սատանային դառնալով։ Այս հարցը բռնում է ԺԸ-ԻԳ գլուխները։

Երկրորդ գրքի սոյն երեք հատուածները՝ ճակատագրի, կանխագիտութեան և բնագրի վերաբերեալ, Եղնիկի գրական շէնքի մէջ նոյնպիսի քարեր են, որպիսի առաջին գրքի երկրորդ մասը, ԺԵ-ԻԷ գլուխները, որ կոչեցինք թարմատար։

Հաւանական է, որ սրանք ևս առնուած են մի տեսակ հարցաբանից, նման Գրիգորի հարցմունքի։ Առաջին՝ ճակատագրի հատուածը որ սկսուում է ԺԴ գլուխ, իրենից անմիջապէս յառաջ ունի մի հետաքրքրական խոստովանութիւն. «հրամանացն ևս հարցուածք սովին մասը լուծանին»։ Կարծես, մի աւանայ ակնարկ է գրաւոր յիշատակարանի՝ հարցածք և լուծումն սովորական տիպարի՝ ճիշէ է, ճակատագրի և բնագրի վերաբերեալ տեսութիւնները կրում են, ինչպէս կը տեսնենք ստորեւ, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»ի ազդեցութիւնը, բայց այդ կարող էր լինել և հարցաբանում։

Կանխագիտութեան նայող հատուածը, ԺԶ գլուխը, սկսուում է «բայց զայն ևս գիտել պարտ է» բառերով, որ ակնյայտին նշան է նոր աղբիւրին։ Առաջին գրքում Գրիգորի հարցմունքից քաջաժ մասերը ընդմիջուած են մի հատուածով, որ նմանապէս սկսուում է «բայց և զայն ևս պարտիմք գիտել» նախադասութեամբ (գլ. ԻԳ)։

1. Նկատենք, որ էջ 158 առջ 9, հետեւում է մի հատուած՝ «և միանգամայն հրամանացն ևս հարցուածք ու վին մասը լուծանին» որի քննութիւնը բռնում է ԺԴ-ԻԱ գլուխները, և անմիջապէս կապուած չէ նախընթաց ԺԴ գլխի հետ, ուր խօսած է սատանայի մասին։ Թուում է, որ ընդհատուած թիւը վերստին կանգնում է, սկսած 180 էջ վերջին առջից, ուր նորէն սատանայի մասին է գրուցը՝ «և փորձել անչափ իշխէ» և այլն։

Երկու ղեկավարում էլ խօսքը ի գրոց է, այսինքն Ս. Գրքի վերայ հիմնած: Գուցէ սրանք հարցարանից դուրս են և հեղինակի կողմից գիտական յանելույթներ:

Երկրորդ գրքի վերջին հինգ գլուխները իր-իւր, իսկապէս, պատկանում են երրորդ գրքին, ուր հերքում է յոյն իմաստունների հայեացքները: Անհաւանական չէ բնաւ, որ սրանք ուրիշ ծագում ունենան քան երրորդ գիրքը: Փոխանցման նախադասութիւնը ի՞նչ գլխի վերջին, «բայց քանզի ի նմին յամառութեան գան և այլն» թոււմ է արդարացնում է մեր ենթադրութիւնը: Այս ղեկավարում և յոյն կրօնքներին նուիրած մասը կը բաժանուի միւս գրքերի նման երկուսի, հիմնական, որ է երրորդ գիրքը և երկրորդական կամ թարմատար, որ մի տեսակ ներածականի ընդթ ունենալով զետեղուած է հիմնականին յառաջ, նախընթաց իր-իւր գլուխները:

Հետազոտութեան արդիւնքը կարող էինք ներկայացնել պատկերօրէն հետեւել տախտակով:

I. վալենտինի ղէմ. հիմնական. Ա. ա-ժգ. թարգ. Մեթոդից.

Թարմատար. ժե-իէ.

(իւր. եզրակացութիւն)

II. Պարսից քէշէ ղէմ. հիմնական. Բ. ա-ժր.

Թարմատար. ժգ-իգ.

(իգ-ի վերջին տողերը եզրակացութիւն)

III. Յոյն իմաստնոց ղէմ. թարմատար. Բ. իգ-իը.

հիմնական. Գ. ա-ժգ.

ժէ սկիզբը՝ եզրակացութիւն)

ժէ.ն շարունակութիւն Մեթոդից.

IV. Մարկիոնի ղէմ. հիմնական. Գ. ժէ, վերջին մասը. և Դ. ա-ժե.

(Թարմատար. ժգ)

մուտ
Միջա

Այսպիսով Եզնիկի գործի ճարտարապետութիւնը կազմուած է երկու մասից, վալենտինի և Մարկիոնի յանդիմանութիւնները մի կողմից, և պարսից և յոյն

իմաստասէրների յանդիմանութիւն միւս կողմից: Այլ և վերջինս ունի հիմնական մասեր, համագոր առաջինի, և երկրորդական կամ թարմատար լրացումներ:

Հիմնականները ծագումով տարբեր են թարմատարներից: վալենտինի յանդիմանութիւնը, ինչպէս յայտնի է, Մեթոդի յաղագս ինքնիշխանութեան գրուածքի հայացումն է:

Մարկիոնի հերքումն նմանութիւն ունի Աղամանտի « յաղագս ողիղ հաւատոյ յԱստուած » տրամախօսութեան:

Անուրանալի է և նրա խնամութիւնը Ս. Եփրեմի և Իրինէոսի նման գրութիւններին, ինչպէս ցոյց է տալիս Մարիէս: Ինչ և իցէ աղբիւրը, աժէն ղեկավարում անկասկած է, որ Մարկիոնի մասը ևս օտար բնագրի հայացումն է նման Մեթոդի գրութեան:

Աւելի քան հաւանական ենք համարում, որ հայի յոյն կաղապարում Մեթոդի ընդդէմ. վալենտինի և անյայտ հեղինակի ընդդէմ Մարկիոնի գրուածքները միասին մի գործ են կազմելիս եղել

ների նկատմամբ: Կարծում ենք, որ պարսից քննիչ հերքումը, ինչպես և յոյն փիլիսոփաների հայեացքները, ոչ միայն թաքցմանութիւն են օտար բնագրից, այլ և հաւանօրէն միասին են եղել, մի հատոր են կազմել նոյն բնագրում: Կանգ առնենք մի բողոք այս կարեւոր հարցի վրայ:

Պարսից քննիչն նուիրած էջերը շատ մօտ աղերս ունին թէնդոր Մամուեհտացու մի գրութեան հետ: Վերջինս մեզ չի հասել, բայց նորա բովանդակութեան մասին հաղորդ հաշիւ է տալիս բազմաբախտ փոսթը իր մատենադարանում: Թէնդորի գրութիւնն այնքան կարեւոր է, որ վաղուց իր վերայ է հրաւիրել իրանագէտների ուշադրութիւնը: Շատերի աչքից չի խուսափել թէնդորի նկատողութեան նմանութիւնը Եզնիկին¹: Բայց Մարիէան առաջինն է, որ հարց է յարուցանում, արդեօք հայ հեղինակը կախում չունի թէնդորից:

Եզնիկի գրութեան նուիրած ճառում Մարիէան որոշում է երկու շերտ, երկու հերքում և այն կարծիքն է ուզում յայտնել, որ մէկի աղբիւրը կարող է իրողոր Տարսնացին լինել և միւսի նորա աշակերտ թէնդորը:

Սակայն, եթէ երկուութեան ծագումն շխտակ ըմբռնենք, կարիք չի լինել տարբեր աղբիւրներ որոնել:

Ինչպէս յայտնի է, պարսից քննիչ մի քանի ճիշդութիւններ, ժի՛ք դարի հեղինակ Շահրեստանին որոշում է երեք դասանութիւն, զրադաշտական, զայումարթեան և զբուհական: Առաջինը ուսուցանում էր, որ Որմիզդն ու Ահրիմանը համագոյ են

a principio, երկրորդը՝ որ Որմիզդն ու Ահրիմանը սկիզբն են առել Զրուանից, այն է ժամանակից²:

Դամասկ(իոս)ի ասելով, Եւդեմ Ռոդոսացին, որ Արիստոտելի աշակերտներէն էր, գիտէր, որ կան երկու տեսակ մոգեր, կամ մոգական ուսմունք, մէկը ամէն բանի սկիզբն էր համարում տեղը (իմաստաբանութիւն), միւսը՝ ժամանակը. Μάγιστος οὐ μὲν τὸπον οὐδ' ἔχ' χρόνον ἀλλοῦσι τὸ νοητὸν ἀπαν³:

Հետաքրքրական է, որ ըստ Աւեստայի (Վինգ. 19. 13. 16) Ահուրա — Մադաւան է, որ ստեղծում է տարածութիւնը *ihwasa* և ժամանակը՝ *zrvan*:

Ժամանակի հասկացողութիւնն, որ կապ ունի շարժում երկնակամարի հետ, որն համարում էր և չարի և քարոյ տնօրէն, բնականօրէն ստանում է և բախտի նշանակութիւն: Իսկ տարածութիւնը, երկնային անհուն տարածութիւնը իր պայծառութեամբ նշանանում է լուսոյ գաղափարի հետ⁴: Այսպիսով *χρόνος* և *τόπος* կամ *zrvan* և *ihwasa* զուգորդում են *bašta* և *farr*, բախտ և փառքի հետ:

Եզնիկն հէնց սկզբից յայտնում է, որ զրուան «Թադմանի բախտ կամ փառք»: Ասել է թէ նա ի նկատի ունի զրուանականութեան երկու ճիւղերը, որոնցից մէկը ընդունում է զրուան — բախտ և միւսը զրուան — փառք վարդապետութիւնը: Յիշատի, առաջին վեց զլուխները նա յատկացնում է զրուան — փառքը ընդունութեան և հերքման, իսկ հետեւեալ վեցը՝ զրուան — բախտին:

Արդ այս մեկնութեամբ ընկնում է տար-

1. Spiegel, Eran. Altert. II, 184. Darmesteter, ohrmazd et Ahriman, p. 338. Casartelli, La philosophie religieuse du mazdéisme, p. 5. Joh. Mich. Schmid. Wider die Secten des Eznik von Kolb. p. 90.

2. Katt. Pettazoni, La religione di Zarathustra. p. 189.

3. Frag. ph. gr. III. p. 289. Darmesteter, o. c. p. 335.

4. Darmesteter, o. c. p. 338. Casartelli, o. c. աւելի պարզ մեկնութիւն է տալիս, յենեւով Շահնամէի

մի տողի վրայ, ուր ասում է որ *zamdān* ունի իր *zamdāne*, այսինքն ժամանակն իր գործադրութիւնները: *Zrvan* իր նշանակէ *zaman*-ի կարող էր ստանալ *zamatane*-ի նման բախտի նշանակութիւն: Եթէ ի նկատի ունենանք, որ աստուծոյ զուգաբար հնում արտայայտւում էր *bha-ga* բառով, որ նշանակում է բաշխել (հաստնօրէն, երկնային լուսի) և որից է և *bašta* բաշխել, բնական կը լինէր տեսնել հնութեան արժեքանք, հին աստուծոյ յատկութիւնը վերաբերած բարեւեալեան աշխարհից տառ (համաժամարար նոր) զրուան հասկացողութեան:

բերադրերնեքի ընդունելու անհրաժեշտութիւնը, Եզնիկը կարող էր միենոյն հեղինակի մօտ գտնել իր երկփեղկ ընդդիմութիւնը, Եւ այդ հեղինակը, հաւանօրէն, Թէոդոր Մոպսուեստացին է։ Սրան է պարտական Եզնիկն ոչ միայն պարսից քէշի այլ և յոյն իմաստասէրնեքի յանդիմանութեան հիմնական բնագիւղները, Թէոդորի գրութեան կազմը հիմք է տալիս մեր կարծիքին։

Փոտի ասելով Մամուեստայի եպիսկոպոսի գրքովը բաղկացած էր երեք գլխից կամ ճառից։ Առաջին ճառը վերաբերում էր մոգական կրօնի քննութեան, իսկ Յաւացեալ երկուսը պարզում էին ճշմարտութիւնը և հաւատի չափերը։

Այն ինչ է տեսում մոգութեան մասին։

«Առաջին ճառում յառաջ է բերում պարսից պիղծ հաւատը, որ աւանդել է Ջարաղը, և որը վերաբերում է զրուանին որին սկիզբն է համարում ամէն բանի և որին կոչում է նաև րախտ։ Եւ թէ ինչպէս զոհում է, որ ծնի Որմիզդին, բայց ծնում է րախտը և Սատանային՝ խօսում է նաև նրանց արեւնապոյծութեան մասին։ Մի խօսքով ամբարշտ և խայտառակ հաւատը կէտ առ կէտ մէջ բերելով, քննում է ատաղին ճառում»։

Այստեղ յիշուած Ջարաղը յայտնի Ջրադաշտն է, Ջարաղուստը, Ջրուանի ուսմունքը, իսկապէս, Ջրադաշտին չի պատկանում, ինչպէս երևում է վերև յիշած Եհրեմաստանի վկայութիւնից։ Բայց Թէոդորը, ինչպէս և Եզնիկը վերաբերում են Ջրադաշտին։

Արեւնապոյծութեան յիշատակութիւնը ակնարկ է Որմզդի խառնակութեան իր հարազատ մօր և քրոջ հետ, որպէս զի

ծնէ արեւն և լուսինը։ Եզնիկը յիշում է երկու աւանդութիւն, որից մէկը տալիս է Ջրադաշտին. «արդ զմին Ջրադաշտում զհեղապարծութեան (փոխի, զհիսապարծութեան)՝ զնէ, և թէ ի մայրենի և ի քեռական ասականաց արեգակն և լուսին արարան» (Բ. 9)։ Նոյնը կրկնում է Բ. 3. «և ապա մայրենի և քերական (!) առականօք զարարած լուսաւորացն մուծանէ»։ Դարձեալ՝ Բ. 8. «արդ թէ իմաստուն էր, ընդ մօրն մտանէր և արեգակն որդի լինէր և ընդ քեռն անկանէր և լուսին ծնանէր»։

Թէոդորի գրութիւնը զուգադիպում է Եզնիկին և զրուանի բախտ կոչումով, ζουρανός... ὅν καὶ Τύχην καλεῖ. Եթէ զրուան բառը իրօք բախտ նշանակէր, զարմանալի չէր լինի այս զուգադիպումը։ Բայց որովհետև երկու բառերը իրար մօտ է բերում և միացնում միայն վարդապետական մեծ կամուրջը, և ուրիշ տեղ չենք գտնում նման յիշատակութիւն, ուստի պէտք է ենթադրել, որ շատ մօտիկ աղբիւս կայ երկու հեղինակներին մէջ, աղբիւս, որ նոյն նշանում է փոխառութեան հետ»։

«Երկու միւս ճառերում Թէոդորը բացատրում է, թէ ի՞նչ է ճշմարիտ հաւատը, սկսելով արարչագործութիւնից, բացատրում է նաև շնորհի հանգամանքները նոյն ոճով, թէև համառօտակի»։

Այս Թէոդորը թւում է թէ Մոպսուեստացին է, աւելացնում է Փոտը, «որովհետև և Նեստորի աղանդի մասին մասնաւանդ երրորդ ճառում նախաբարձ է լինում պարզօրէն, այլ և բարանջում է մեղաւորներին վերականգման մասին»։

Բարեւոյ կենսաբացին վեցօրեայքի մէջ յաճախ կոչ է անում հեթանոս, առաւել

1. P. G. 108 col 281. Բնագիրը բերած ենք «Մաշ-Քոյ և Նորա արևկերանքը յօդաւանդ, Հանդ. Ամս. 1925, Բերում է նաև Մարիէի մօտ. Le de Deo d'Ezraik de Kolb. 1924. Paris.

2. Թէ որտեղից է աճում ինքն Մոպսուեստացին, այդ խնդիրը մեր անմիջական զբաղման նիւթ չէ։ Սկզբնական ուղիւրն, անշուշտ, պահաւանդ է, օր. Minok-i-xrat յայտնի յիշատակարանը զեւէ, որ

զրուանը նոյնանիշ է բախտի կամ այդպէս է կոչում, Darmesteter. Ohrmazd. էջ 318. Եղեւիս իր հօշաւ կարող զարոյցով վաղ ժամանակներից զիտութեան լուսատու շահ էր և խոշոր անուններ ունէր, որոնք ամէն տեսակ հերետիկոսութեան դէմ պայքարէին։ Կիլիկիա և Ասորիք, Թէոդորի գործունէութեան վայրերը, հետև չէին Եզնիկայի լուսաւոր մթնոլորտից։

լապէս, յոյն իմաստասէնների հայեացքներին, մէջ է բերում նրանց վարդապետութիւնը, յիշատակում է նաև աստեղագէտների ուսմունքը, որպէս զի ցոյց տայ նրանց տկարութիւնը, հերքէ է փոխարէնը սերմանէ քրիստոնէական հաւատից բողոքած ճշմարիտ տեսութիւններ և մեկնում թիւններ:

Շատ կէտերում նկատում է մօտ առնչւումներն թարաքողի և Եզնիկի մտքերի մէջ, առնչութիւն, որ երբեմն նոյնանում են և լեզուական դարձումներով:

Արդ Թէոդորի երկրորդ և երրորդ ճառերը կարող էին վնասողաբար հետ ընդհանուր գիծ ունենալ և արարելութեան յարակից և նրա առթիւ յարուցանելի խնդիրների քննութիւնն ու լուսարանութիւնը պարունակել: Այս դէպքում Թէոդորի երկու ճառերը կը մօտենային իրենց բնաւորութեամբ Եզնիկի երրորդ հիմնական բնագրին, ուր քննւում է աստեղագէտների և փիլիսոփաների ուսմունքը:

Թէոդորը երրորդ ճառում խօսում է շնորհի մասին, այսինքն Քրիստոսի մարդեղութեան Եզնիկին ևս ճիշդ համեմատելի մասում Գ. 16 գլխում, բոլոր կրօնների տեսութիւնից յետոյ, կանգ է առնում այն հարցի վրայ: «Աշարհաւ է մանաւանդ, որ մեկնել կամենալով թէ «ընդէր յաւմեաց զալուստն» Քրիստոսի՝ բերում է բժշկի օրինակը (Գ. 16 էջ 233), որը գտնում ենք Որիգենի մօտ, և որը նորաւից անցել է միւս հայրերին, ինչպէս ցոյց է տալիս Մարիէսը (էջ, 58): Նոյն քննադատը մօտանալի է անում և մի ուրիշ օրինակ, որ հաւասարապէս գտնում ենք Եզնիկի և Որիգենի մօտ (էջ 56): Այս կէտերը ևս մերձեցնում են Եզնիկին Թէոդորին:

Փոռ պատրիարքը դժգոհ է, որ Թէոդորը բարբանջում է մեղաւորների վերականգման մասին: Խօսքը ἀποκατάστασις-ի մասին է, մի հասկացողութիւն, որ հեղինակը Որիգենէ ¹, և որը հետագայում խոտելի համարուեց եկեղեցու կողմից:

• Արդ այս հանգամանքը կապում է Թէո-

դորին զաղափարական թելով հռչակաւոր Աղէքսանդրացու հետ: Որիգենեան նիւթերը, ուրեմն, Թէոդորից կարող էին անցնել Եզնիկին: Սրանով մեր ենթադրութիւնը Եզնիկի և Թէոդորի յարաբերութեան մասին մի նոր նեցուկ է ստանում:

Հայ աւելի կարեւոր փաստ փոռ պատրիարքը վկայում է, որ Թէոդորի մեղադրեցնող ճառերը ուղղուած են եղել մի հայ քորեպիսկոպոսի, որի անունը հնչում է Μαστωρίος Մաստրիոս: Խօսքը, անտարակոյս, հայ լուսաւորութեան հայր Մաշթոցի մասին է: Μαστωρίος-ը ուղղելու է Μαστούριος: Մեր դիտողութիւններն այս առթիւ յայտնել ենք առանձին յօդուածում և պարզել այն հիմքերը, որոնք թիկունք են տալիս մեր կարծիքի ²: Մաշթոցի համար գրուած երկը, ի հարկէ, կարող էր տրամադրելի լինէր նրա սիրասուն աշակերտին, Եզնիկին:

Թէոդորի գրութեան մերձաւոր առիթը յայտնի չէ: Հայ գրի անխնայ աշխատաւորը կարող էր իր որոնմաների ժամանակ յարաբերութեան մէջ մտած լինել նորա հետ:

Հայաստանը միայն աշխարհակալների քաղաքական տենչանքների մրցարան չէր այլ և կրօնական և զաղափարական մեծ շարժումների, հին և նոր քաղաքակրթութեանց նշանաւոր հանգոյց: Հնարաւոր է, որ Մաշթոցը բացի տեսական, հարցասիրական կարիքից, ունենար և որեւէ գործնական շարժումիթ, ասանք, մոլոր ուսմունքների տարածման իրական թէ սպառնացող վտանգի դէմ մարտումը:

Մաշթոցին մատչելի գրականութիւնը սեփականութիւն կարելի է համարել նրա դպրոցի Եզնիկին, իբր նրանցից մէկը, հնարաւորութիւն ունէր օգտուելու Թէոդորի առ Մաշթոց գրած գործից այս կամ այն չափով:

1. Tixeront, Histoire des dogmes, I. p. 327.

2. «Մաշթոց և նրա աշակերտները». Հ. Ա. 1925:

(Շարայարելի)

Պրոֆ. Ն. ԱՊՐԱՅԵ